



Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

## ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### Եվրոպական միությունը մեկնարկում է նոր ծրագիր՝ Հայաստանում կլիմայի փոփոխության հետ կապված հարցերը լուծելու նպատակով

Երևան, 30 ապրիլի 2019

2019թ.-ին Եվրոպական միությունը (ԵՄ) մեկնարկեց «ԵՄ-ն կլիմայի համար» նոր տարածաշրջանային նախաձեռնությունը՝ աջակցելու Արևելյան գործընկերության վեց երկրներին (Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Վրաստան, Մոլդովա, և Ուկրաինա) մշակել և իրականացնել կլիմային առնչվող քաղաքականություն՝ հիմնվելով կլիմայի փոփոխության մասին Փարիզի համաձայնագրի, ԵՄ-ի հետ ասոցացման և գործընկերության համաձայնագրերի, Արևելյան գործընկերության «20 արդյունքներ մինչև 2020թ.» քաղաքականության նախաձեռնության, ինչպես նաև ՄԱԿ-ի 2030թ.-ի Կայուն զարգացման օրակարգի ներքո երկրների պարտավորությունների վրա: 8,8 միլիոն եվրո ընդհանուր բյուջեով «ԵՄ-ն կլիմայի համար» ծրագիրն օգնելու է երկրներին մշակել և իրականացնել հեռանկարային կլիմայական քաղաքականություն:

Այսօր, Եվրոպական միությունը՝ ծրագրի իրականացման գործընկեր ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի (ՄԱԶԾ), ՀՀ կառավարության, և տարբեր շահագրգիռ խմբերի ներկայացուցիչների հետ միասին, հավաքվել էին ծրագրի մեկնարկային սեմինարին՝ քննարկելու «ԵՄ-ն կլիմայի համար» ծրագրի գերակայությունները և իրականացման համար անհրաժեշտ հաջորդ քայլերը:

2019-2022թթ.-ի համար նախատեսված Հայաստանին հատկացվող ընդհանուր 857,000 եվրո ֆինանսավորմամբ, ծրագիրն աջակցելու է Փարիզի համաձայնագրով Ազգային մակարդակով սահմանված ներդրումների (ԱՄՍՆ) իրականացման պլանի և ճանապարհային քարտեզի մշակմանն ու կիրառմանը Հայաստանում: Այն նաև նպաստելու է ԵՄ կլիմայի օրենսդրության հետ համապատասխանեցմանը, ոլորտային քաղաքականությունում կլիմայի փոփոխության հարցերի ներառմանը՝ նպաստելով Հայաստանի ցածր ածխածնային զարգացմանը:

«ԵՄ-ն կլիմայի համար» ծրագիրն աջակցելու է ՀՀ կառավարության նպատակներին՝ մշակելու երկրի թարմացված և հզորացված ԱՄՍՆ-ները մինչև այս տարվա ավարտը, ձգտելով լինել առավել հավակնոտ: «ԵՄ-ն կլիմայի համար» ծրագիրը կներառի միջազգային օժանդակության առանցքային մեխանիզմները ԱՄՍՆ գործընկերության քարտեզագրման նախաձեռնության համատեքստում (ՀՀ-ն միացել է անցյալ տարի՝ <https://ndcpartnership.org/>): Մեկնարկելով այս նոր ծրագիրը՝ ԵՄ-ն ձգտում է ապահովել, որ գործընկեր երկրները, արդեն իսկ գտնվելով կլիմայի փոփոխության ազդեցության տակ, ունենան անհրաժեշտ կարողություններ հարմարվողականության բարձրացմանն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու համար», ասաց ՀՀ-ում Եվրոպական միության պատվիրակության Համագործակցության բաժնի ղեկավար Գոնգալո Սեռանոն:

«Հայաստանը ակտիվորեն հասցեագրում է կլիմայի փոփոխության հարցերը և վավերացրել է Փարիզի համաձայնագիրը: Կառավարությունը մշակել է կլիմայի փոփոխության ազգային քաղաքականություն, որի արդյունքն է հանդիսացել մինչև 2030թ.-ը կլիմայի պետական քաղաքականության

իրականացման հայեցակարգի ընդունումը, ազգային հարմարվողականության ռազմավարության և պլանի մշակումը և հաստատումը, և այլ միջազգային երկրի դիմակայուն և կայուն զարգացմանը համահունչ: Միջազգային գործընկերների, հատկապես ԵՄ-ն, ՄԱԶԾ-ի և զարգացման այլ գործընկերների աջակցությունն այս նվաճումներում ունեցել է առանցքային դեր: Մենք ողջունում ենք «ԵՄ-ն կլիմայի համար» ծրագրի մեկնարկը, որը հիմնվելու է կլիմայական քաղաքականության ոլորտում մինչ այժմ ձեռք բերված նվաճումների վրա, միևնույն ժամանակ հասցեագրելով Հայաստանի համար կլիմայի փոփոխության ոլորտի ռազմավարություն և իրականացման ճանապարհային քարտեզ մշակելու առաջացող կարիքը», ասաց ՀՀ բնապահպանության նախարարի առաջին տեղակալ Իրինա Ղափլանյանը:

«Որպես ՄԱԿ-ի համակարգում կլիմայական գործողությունների ամենախոշոր իրականացնող, ՄԱԶԾ-ն աշխատում է երկրների հետ՝ վերածելու իրենց նպատակները գործողությունների: ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող ClimaEast ծրագրից քաղված դասերի և հաջողված փորձի հիման վրա, ՄԱԶԾ-ն կօգնի բացահայտել կլիմայի մեղմման և հարմարվողականության մոտեցումները՝ գործընկերներին ավելի լավ նախապատրաստելու, ջերմոցային գազերի արտանետումները կրճատելու և կլիմայի փոփոխության ազդեցությունները Հայաստանում մեղմելու նպատակով», ասաց Հայաստանում ՄԱԶԾ մշտական ներկայացուցիչ Դմիտրի Մարիյասինը:

«ԵՄ-ն կլիմայի համար» ծրագիրը հիմնվում է նախորդ և ընթացիկ ծրագրերի, գործընկերությունների և նախաձեռնությունների ընթացքում ձեռք բերված փորձի, ինչպես նաև տարածաշրջանի և երկրի մակարդակներում կլիմայական քաղաքականության մշակման և կառավարման ԵՄ-ի և ՄԱԶԾ-ի փորձառության վրա:

\*\*\*

Եվրոպական միության անդամ երկրները որոշել են աստիճանաբար կապակցել իրենց նոս-հաուն, ռեսուրսներն ու ուղիները: 50 տարվա ընդարձակման ժամանակահատվածում նրանք միասին ստեղծել են կայունության, ժողովրդավարության ու կայուն զարգացման տարածք՝ պահպանելով մշակութային զանազանությունը, հանդուրժողականությունը և յուրաքանչյուրի անկախությունը: Եվրամիությունը հանձնառու է կիսել իր ձեռքբերումներն ու արժեքները իր սահմաններից այն կողմ գտնվող երկրների ու ժողովուրդների հետ:

\*\*\*

ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը գործընկերային կապեր է հաստատում հասարակության բոլոր խավերի ներկայացուցիչների հետ՝ զորակցելով պետություններին դիմակայելու ճգնաժամերին: ՄԱԶԾ-ն խթանում է նաև աճը, որ կոչված է բարելավելու յուրաքանչյուր անձի կյանքի որակը: Մնայուն ներկայություն ունենալով մոտ 170 երկրներում և տարածքներում՝ մենք համաշխարհային փորձ և տեղական լուծումներ ենք մատուցում՝ նպաստելով կյանքի բարելավմանը և աջակցելով կայուն պետականության ձևավորմանը: ՄԱԶԾ-ն հաստատվել է Հայաստանում 1993թ. մարտին և աջակցում է կառավարությանն իրականացնելու ազգային զարգացման առաջնահերթությունները, ինչպես նաև հասնելու Կայուն զարգացման նպատակներին:

Հավելյալ տեղեկատվության համար դիմել՝



**Հովհաննես Սառաջյանին**

ՄԱԶԾ հասարակայնության հետ կապերի համակարգող

Հեռ.՝ (+374 60) 530000 (128)

Բջջ.՝ (+374 91) 420122

Էլ. փոստ՝ [hovhannes.sarajyan@undp.org](mailto:hovhannes.sarajyan@undp.org)

Empowered lives.  
Resilient nations.